մնում էր փոքր տղայի հետ նրա անփորձ կնոջն օգնելու համար, սակայն երբեմն էլ գերադասում էր ապրել ավագ տղայի ընտանիքում՝ սովորած լինելով ավագ հարսի հետ տնտեսություն վարելու։

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել ժառանգական իրավունքներին վերաբերող մի քանի մանրամասնություններ, որ գրանցել է Ս. Պ. Զելինսկին՝ հետազոտելով Զանգեզուրի արքունի գյուղացու ընտանիքի անդամների հողօգտագործման պայմանները[117]։ Ըստ սովորութեական իրավունքի «անձնական սեփականություն են համարվում կանանց զարդերը, մատանիները, օղերը և այլն, և ընտանիքի անդամների զենքը։ Բաժանման էր ենթարկվում ամբողջ գույքը, բացի առանձին անդամների անհատական սեփականությունից։ Բաժանվող բոլոր առարկաներից ժառանգների ընդհանուր օգտագործմանը մնում էր միայն ջրաղացը։

«Հայերի մեջ ուղղակի ժառանգ են համարվում արու զավակները, որոնք ժառանգում են շարժական և անշարժ գույքը, ինչպես և հողաբաժինները։ Աղջիկները, եթե եղբայրներ կան, հայրական գույքից ոչինչ չեն ստանում։ Եթե եղբայրներ չկան, մեռածի գույքն անցնում է կնոջն ու աղջիկներին, ընդ որում մեռած սեփականատիրոջ իրավունքներից օգտվում է նրա կինը։

«Տան տիրոջ մահից հետո, ոչ կինը, ոչ էլ աղջիկները չեն զրկվում հողաբաժիններից, որոնցից օգտվում են աղջիկները մինչև մարդու գնալը, իսկ կինը մինչև մահը կամ երկրորդ անգամ ամուսնանալը։ Բազմաթիվ գյուղերում աղջիկների մարդու գնալու դեպքում նրանց հողաբաժիններն անցնում են նրանց ամուսիններին, եթե միայն սրանք նույն հասարակության անդամներ են։ Հակառակ դեպքում հասարակությունը նրանցից առնում է այդ հողերը։ Պետք է ասել, որ այդ արվում է միայն վարելահողերի վերաբերյալ և ոչ թե այգիների և շենքերի, որոնք անցնում են մարդու գնացած աղջիկների ամուսիններին առանց որևէ սահմանափակման։

«Եթե մեռած սեփականատիրոջից հետո ուղղակի ժառանգ՝ արու կամ կին զավակ կամ կին ամուսին մնացած չի լինում, հողաբաժինները՝ վարելահողը և խոտհարքը հասարակությունն առնում է, իսկ մնացած գույքը, նույն թվում և այգիները, ջրաղացներն ու տնտեսական շենքերն անցնում են մերձավոր ազգականներին։

«Չբաժանված եղբոր մահից հետո գույքի նրա բաժինը մնում է նրա կենդանի եղբոր տրամադրության տակ, որը պետք է պահի մեռածի կնոջը և զավակներին։ Եթե մեռած եղբորից հետո մնում են արու զավակներ, նրանց բաժանման միջոցին շարժական և անշարժ գույքը, նույնպես և հողաբաժինները կիսվում են, սակայն եթե մնացած են լինում իգական սեռի զավակները, բաժանման միջոցին նրանք ստանում են շարժական գույքի և այգիների կեսը, իսկ հողաբաժիններն ամբողջությամբ մնում են կենդանի եղբոր օգտագործմանը։ Մեռած եղբոր կինը, եթե զավակներ ունի, ապրում է կենդանի եղբոր հաշվին, բայց եթե զավակներ չունի, վերադառնում է հոր տունը և իրավունք ունի հետը տանելու միայն իր օժիտը։

«Տղային բաժանելիս հայրը պարտական է տալ նրան անկողին, պղինձեղենից կամ անասունից այս կամ այն մասը, սակայն թե այդ իրերից որ մասը՝ որդին իրավունք չունի ոչ մի պահանջ ներկայացնելու։ Հողաբաժիններից, գլխավորապես վարելահողից, հայրը պետք է բաժին հանի բաժանվող որդուն

---

[117] *Зелинский С. П.*, նշված աշխ., էջ 56—57։